# 28. ԻՄ ԽՕՐՕԴԻԿ ՅԱՐ　МОЯ ПРЕКРАСНАЯ ВОЗЛЮБЛЕННАЯ




Сканировано с CamScanner

## ԻՄ ԽՈՐՈԴԻԿ ՅԱՐ

Իմ խորոդիկ յար բախշէն պառգեր է,
Քամին զարգեր է, դօշվին բացվեր է։
Քամին զարգեր է, դօշվին բացվեր է,
Դօշվնի շօղքեն լուսնակ խամրեր է։
Յար նանայ, նայ, նայ, վայ
նանայ, նայ, նայ,
Դօշվնի շողքեն լուսնակ
խամրեր է,

Դօշվնի շողքեն լուսնակ խամրեր է,
Յարից դեսեր է, հոգին քաղվեր է։
Յարից դեսեր է, հոգին քաղվեր է,
Յարոջ ռեսներէն բաք մի քաղեր է,
Յար նանայ, նայ, նայ, վայ
նանայ, նայ, նայ,
Յարոջ ռեսներէն բաք մի քաղեր է։

Յարոջ ռեսներէն բաք մի քաղեր է,
Կռունկ գեղուց-գեղ խաբրիկ տարեր է,
Յար նանայ, նայ, նայ, վայ
նանայ, նայ, նայ,
Կռունկ գեղուց-գեղ խաբրիկ
տարեր է։

Сканировано с CamScanner